

Լարինե Միրզոյան, Միքայել Միրզոյան



Եկարիչ՝ Տիգրան Ամյան

Եկարագարդ ուսուցողական
մատենաշար 3-6 տարեկան
երեխաների համար



ԳԻՐՔ 4

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ



| | |
|--|----|
| ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ | 4 |
| ԵՐԿՐԱԳՈՒՆԴ | 6 |
| ԵՐԿԻՆՔ | 8 |
| ԱՄՊԵՐ | 10 |
| ՀՈՐԻՉՈՆ | 11 |
| ԽԱՂ՝ «ԳՏԻՐ ԶՈՒՅԳԵՐԸ» | 12 |
| ԳԻՇԵՐ ՈՒ ՑԵՐԵԿ | 14 |
| ՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ ԳԻՇԵՐԸ ԶԵՆ ՔՆՈՄ | 15 |
| ԳՏԻՐ ՍԽԱԼՆԵՐԸ | 16 |
| ԽԱՂ՝ «ԻՆՉԵՐՆ ԵՆ ԲԱՅԱԿԱՅՈՒՄ ԵԿԱՐՆԵՐՈՒՄ» | 17 |
| ԻՆՉ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ ԶՄԵՐՈՒԿԻ ԵՎ | 18 |
| ՏԱՐԿԱ ԵՂԱՆԱԿԵՐԸ | 19 |
| ԶՄԵՈ | 20 |
| ԲՈՒՄԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԶՄՈԱՆԸ | 22 |
| ԳԱՐՈՒՆ | 24 |
| ԲՈՒՄԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԳԱՐՆԱՆԸ | 26 |
| ԱՄԱՌ | 28 |
| ԲՈՒՄԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՆ ԱՄՈԱՆԸ | 30 |
| ԱՇՈՒՆ | 32 |
| ԲՈՒՄԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՆ ԱՇՆԱՆԸ | 34 |
| ԳՏԻՐ ԵԿԱՐՉԻ ՍԽԱԼՆԵՐԸ | 36 |
| ՋՈՒՐ | 37 |
| ԵՐԿՐԱԳՆԴԻ ՋՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ | 38 |
| ՍՏՈՐՋՐՅԱ ԱՇԽԱՐՀՈՒՄ | 40 |
| ԿԵՏԱՆՄԱՆՆԵՐ | 42 |
| ՀԵՏԱՔՐՔԻՐ ՈՐԴԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ | 44 |
| ՕԳՆԻՐ ԸՆՏՐԵԼ ԵՎԵՐՆԵՐ | 46 |

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Ողջուն, մեր լավ բարեկամ: Ահա և նորից հանդիպեցինք: Դու նույնիսկ չես էլ կարող պատկերացնել, թե այս ամբողջ ընթացքում մենք որտեղ ենք եղել և ինչեր ենք տեսել: Հիմա կպատմենք:




Մենք ընտանիքներով մեկնել էինք շուրջ-երկրյա ծանապարհորդության: Միայն տեսնեիր, թե քանի ծածարուկ էինք մեզ հետ տարել: Բացի հագուստից ու կոշիկներից, վերցրել էինք նաև ֆուտոլսցիկ, գրքեր, մի մեծ ալբոմ և գունավոր մատիտներ:

Մեր ծամփորդությունը տևեց բավական երկար. չէ՞ որ երկիր մոլորակը, որի վրա մենք ապրում ենք, շատ մեծ է: Սարեր ու ձորեր, գետեր ու ծովեր ենք կտրել: Տեսել ենք զանազան բույսեր ու կենդանիներ: Հանդիպել ենք հետաքրքիր մարդկանց: Իհարկե, հափշտակված զարմանահրաշ բնությամբ, կարող էինք ավելի երկար ծանապարհորդել, սակայն վերադառնալու ժամանակն էր:



ԵՐԿՐԱԳՈՒՆԴ

Աճիչելի ժամանակներից մարդիկ կարծում էին, որ երկիրը տափակ է և տեղավորված է երեք կետերի վրա, իսկ հիմա նույնիսկ փոքրիկ երեխաները գիտեն, որ երկիրը գնդաձև է:



Մարդիկ պատրաստել են երկրագնդի փոքր մոդելը և այն անվանել գլոբուս: Իսկ դու ունե՞ս գլոբուս: Եթե ոչ՝ չտխրես: Ես ու Արտեմը քեզ կսովորեցնենք, թե ինչպես այն պատրաստել: Գլոբուսը մենք կպատրաստենք նարնջից, իսկ ձողի փոխարեն կվերցնենք երկար մատիտ: Մատիտը պետք է անցկացնել նարնջի միջով վերևից ներքև: Եթե դժվարանաս, խնդրիր մեծերից որևէ մեկին օգնել քեզ:

Մատիտն անվանենք երկրագնդի առանցք: Ի՞նչ դիրքով է պետք այն պահել: Մատիտը նարնջի հետ հարկավոր է մի փոքր թեքել:



գլոբուս



երկրի առանցք


Հյուսիսային բևեռ



Հարավային բևեռ

Այժմ արի հանենք մատիտը նարնջի միջից: Տեսնո՞ւմ ես նարնջի վրա մնաց երկու անցք՝ վերևում և ներքևում: Դրանք բևեռներն են: Գլոբուսի վերևում Հյուսիսային բևեռն է, իսկ ներքևում՝ Հարավայինը:






հասարակած

Հիմա էլ եկ մեր «գլոբուսին» թելով «գոտի» կապենք՝ ծիշտ մեջտեղում, և այն անվանենք հասարակած:


հյուսիսային կիսագունդ



Հասարակածը երկրագունդը բաժանում է երկու կեսի: Այն կեսը, որտեղ Հյուսիսային բևեռն է, կոչվում է հյուսիսային կիսագունդ, իսկ այն կեսը, որտեղ Հարավային բևեռն է՝ հարավային կիսագունդ:

հարավային կիսագունդ

արևմտյան կիսագունդ



Երկրագունդը բաժանում են նաև արևմտյան և արևելյան կիսագնդերի: Բաժանման գիծն անցնում է Հյուսիսային բևեռից մինչև Հարավային, այսինքն՝ գլոբուսի վրա վերևից ներքև:

արևելյան կիսագունդ

Իրականում երկրագունդը չունի ո՛չ գոտի, ո՛չ ծող, ո՛չ էլ բևեռներում անցքեր: Դրանք երևակայական գծեր ու կետեր են: Այս անվանումները մեզ հնարավորություն են տալիս հեշտորեն բացատրելու բնության շատ երևույթներ:



ՈՐ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԸ ԳԻՇԵՐԸ ՉԵՆ ԲՆՈՒՄ

Կենդանիների զգալի մասը քնում է գիշերը, սակայն կան կենդանիներ էլ, որոնք, ընդհակառակը, ցերեկն են քնում:

Գրեթե բոլոր կրծողները, ոզնիները, գայլերը, բորենիները, կատուները, թռչունների մի մասը և էլի որոշ կենդանիներ ակտիվ են հիմնականում գիշերը, չնայած նրանց երբեմն կարելի է արթուն տեսնել նաև օրվա տարբեր ժամերին:

Քամ գիշերային գիշատիչ թռչուն է: Գիշերը բուն լավ է տեսնում, իսկ եթե շատ մութ է, այս թռչունը կողմնորոշվում է ոչ թե տեսողությամբ, այլ լսողությամբ:



Չղջիկը գիշերն ակտիվ է, իսկ ցերեկը գլխիվայր քնած է:



Ալվերտով սնվում են շատ կենդանիներ, դրա համար էլ ցերեկը մկները թաքնվում են: Այս նկարում կա երեք թաքնված մկնիկ, որոնց պետք է գտնել: Ես դրանց արդեն գտել եմ: Դու՛րս էլ փորձիր:

